

ՕՏԱՐԱԶԴԻ ԲԱՌԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ*

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

ՀՍՍՀ ԿԱ րզրակից-անդամ

Ավելի քան երեք տասնամյակ առաջ՝ 1939 թ., ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է ընդունել «Ռուսերեն և օտար բառերի ու տերմինների տառադարձության նորմաների» վերաբերյալ, Այդ որոշումը դրական դեր է խաղացել ռուսերեն և օտար բառերի ու տերմինների ուղղագրության, դրանց տառադարձման ուղղությամբ։ Սակայն հայոյ լեզվի զարգացման արդի էտապում այդ նորմաները ճշտելու և լրացնելու հրամայական անհրաժեշտություն է առաջացել։ Մասնավորապես պետք է նշել հետևյալը.

1. 1939 թ. ընդունված որոշումը դեռևս բավական հեռու է առօրյա պրակտիկայում հանդիպող բոլոր հիմնական դեպքերն ընդգրկելուց։ Այսպես, արևելյան լեզուների կապակցությամբ որոշման մեջ նշվում է միայն հետևյալը. «Արևելյան լեզուներից հայերենի մեջ մտած տերմինները, բառերը և հատուկ անոտները տառադարձել ըստ տեղական արտասանության. օրինակ՝ Թեհրան, Ղազվին, Ահմադ, Ղուրան, էֆենդի և այլն»¹։ Եթե այս կանոնը քիչ թե շատ կողմնորոշում է հայերի հետ տեղական շփման մեջ գտնվող այնպիսի ժողովուրդների լեզուներից առնվող բառերի դեպքում, ինչպիսիք են պարսիկները, թուրքերը, ադրբեջանցիները և այլն, ապա մնացած բոլոր դեպքերում հարցը բաց է մնում։ Մինչդեռ այժմ, երբ զրեթե ամեն օր հաղորդագրություններ են տպագրվում Զինաստանի, Հնդկաստանի, Վյետնամի, Կորեայի և այլ երկրների մասին, ավելի մանրամասն կանոններ տալը դառնում է խիստ անհրաժեշտ։

Այդպիսի կանոնների բացակայությունը հասցրել է այն բանին, որ հայերենում հանդես են եկել տառադարձման միանգամայն անհանդուրժելի ձևեր. այսպես, կորեական շնչեղ խուլերը, որոնք լիակատար զուգահեռ ունեն հայերեն փ, բ, ֆ, չ-ի մեջ, ըստ ռուսական տառադարձության (ПХ, ТХ, КХ, ЧХ) տառադարձվում են փխ, բխ, ֆխ, չխ ձևերով. հմմտ. Փխենյան (փխկ. Փենյան), Զխունյան-Պուկյո (փխկ. Զունյո-Պուկյո) և այլն. հնդկական շնչեղ ձայնեղները, որոնք կարող են տառադարձվել մերձավոր բհ, դհ, զհ, չհ կապակցություններով, երբեմն տառադարձվում են ըստ ռուսերենի՝ բխ, դխ, զխ, չխ ձևով. հմմտ. բխայ-բխայ (փխկ. բհայ-բհայ), Բխիլայի (փխկ. Բհիլայի), Գխոշ (փխկ. Գհոշ) և այլն։ Որոշակի կանոններ չեն տրվում նաև եվրոպական լեզուների և նույնիսկ ռուսերենի դժվարություններ կայացնող մի շարք բառերի տառադարձության վերաբերյալ։

Տերմինաբանական կոմիտեն հետագայում անգրադարձել է առանձին հարցերի, բայց մնում են զգալի թվով այլ դեպքեր, որոնց համար հարկավոր է տալ որոշակի ցուցումներ։

* Հոդվածը տպագրվում է մտքերի փոխանակության կարգով։

¹ Ս. Ղ ա զ ա ր յ ա ն, Ուղեցույց տերմինաբանական կոմիտեի որոշումների, Երևան, 1945, էջ 20։ Զ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Տերմինաբանական ուղեցույց, Երևան, 1964, էջ 25։

հարկավոր է ի մի բերել, միատեսակ դեպքերը համադրել, եղած հակասությունները վերացնել և մասսայական ընթերցողի ձեռքը տալ մեկ ընդհանուր որոշում, որ հնարավորություն կտա կողմնորոշվելու դոնե կարևորագույն դեպքերում:

Այս նկատառումներով էլ մենք ներկայացնում ենք օտարազգի բառերի, տերմինների և հատուկ անունների տառադարձման սկզբունքների և նորմաների ներքոհիշյալ նախադիժը:

Նկատի ունենալով, ա) որ օտարազգի և ռուսերեն բառերի, տերմինների և հատուկ անունների տառադարձման տերմինաբանական կոմիտեի կողմից 1939 թ. հաստատված նորմաներն ու սկզբունքները հետագայում զգալի շահով փոփոխվել ու լրացվել են տերմինաբանական կոմիտեի հետագա մի շարք որոշումներով, բ) որ այդ բոլորով հանդերձ ձևակերպված նորմաներն ու սկզբունքները հեռու են ամենօրյա աշխատանքում հանդես եկող բոլոր հիմնական դեպքերն ընդգրկելուց, գ) որ հաստատված նորմաներն ու սկզբունքները հաճախակի խախտվում են (մանավանդ անգլերեն բառերի տառադարձման ժամանակ), և որ լրացուցիչ նորմաների բացակայության դեպքում հանդես են գալիս դիտական տառադարձման ընդհանուր սկզբունքների ու հայերենի առանձնահատկությունների ոտնահարման, տառադարձման բնագավառում անհանդուրժելի անմիօրինակության աղաղակող դեպքեր, անհրաժեշտ համարել վերանայել ու լրացնել 1939 թ. որոշումը և հաստատել ռուսերեն ու օտարազգի բառերի ու տերմինների տառադարձման հետևյալ սկզբունքներն ու նորմաները².

1. Ա-ի և է-ի միջին արտասանությունն ունեցող անգլիական (և այլ լեզուների) a-ն առ տառադարձել ա. օրինակ՝ Ալիս (Alice), Ալան (Allan), Բաֆստեր (Baxter), դանդի (dandy). Գարիկ (Garrik), լանդլորդ (landlord), Մաքսվել (Maxwell), Նանսի (Nancy), Սանֆորդ (Sanford) և այլն:

2. Բաց վանկերում և որոշ դիրքերում որպես ei արտասանվող անգլ. a-ն տառադարձել ե. օրինակ՝ Բեկոն (Bacon), Դեվիս (Davis), Ջեյմս (James), Ուելս (Wales), Քեմբրիջ (Cambridge) և այլն:

Ման. ei արտասանվող անգլ. ei, ai, ay կապակցությունները տառադարձել եյ. օրինակ՝ Դեյտոն (Dayton), Թեյլոր (Taylor), Փեյն (Paine) և այլն:

3. Բաց և երկար o (o:) արտասանվող անգլ. a-ն տառադարձել բառասկզբում o և բառավերջում ո՝ ըստ հայերենում o-ի և ո-ի գրության ընդհանուր կանոնի. օրինակ՝ օլդերման (olderman), Բոլդվին (Baldwin) և այլն:

Ման. Ավանդաբար ա-ով գրվող բառերը թողնել անփոփոխ. օրինակ՝ Բալտիմոր (Baltimore), Վալտեր (Walter) և այլն:

4. Ռուսերենում a-ով վերջացող օտարազգի բառերի a-ն պահպանել միայն հետևյալ դեպքերում.

ա) եթե a-ին նախորդում է որևէ ձայնավոր (oa, ya). օրինակ՝ բոա, բուրժուա, ամպլուա և այլն.

2 Քանի որ լատինատառ և ռուսատառ այբուբեններ չունեցող լեզուների համապատասխան բառերը առնվում են լատինատառ և ռուսատառ լեզուների միջնորդությամբ, կամ դիտական տառադարձման ժամանակ հիմք են ծառայում լատինական և ռուսական այբուբենները, ուստի առաջիկա շարադրանքում «լատինական» և «ռուսական» բառերի տակ պետք է հասկանալ նաև ոչ լատինատառ և ոչ ռուսատառ լեզուների համապատասխան տառադարձումները:

բ) եթե ա-ին նախորդում են բաղաձայնական այնպիսի կապակցություններ, որոնք հայերենի համար խորթ են կամ առանց ձայնավորի անարտասանելի (кба, нба, бза, мза, тка, тка, вма, гма, мна, бра, дра, тра և այլն). օրինակ՝ անախկվա (տպատառի տեսակ), կանվա, կոբգա (ուկրաինական երաժշտ. գործիք), պեմգա, կեպկա (մի տեսակ գլխարկ, ռուս. -ка ածանցով), աբավմա, մագմա, սինտագմա, ֆլեգմա (քիմ.), ստիգմա, փոգմա, դոմնա, ջվաբրա, կոբրա, էսկադրա, հիդրա, սալամանդրա (բայց սաղամանդր՝ հին փխռ.), տունդրա, պալիտրա.

գ) եթե ա-ն շեշտակիր է (մանավանդ արևելյան ծագում ունեցող բառերում). օրինակ՝ կանվա, ալպագա (մի կենդանի) (ռուս. альпага), տամդա (ռուս. тамга), ֆանգա (չին գյուղաց. տուն) և այլն.

դ) եթե ա-ի հետ միասին բառը երկու վանկ է կազմում, և ա-ն հանելու դեպքում հայերենը կունենա մեկ վանկ. օրինակ՝ կոլբա, տոգա, բանդա, օդա, սոդա, բագա, վիգա, դոգա, թեմա, տոննա (նաև տոնն). կասկա, դամա. կաստա, ռենտա, իուլետա, նուտա, նոբմա և այլն.

Ման. ա շունեցող հին փոխառությունները պահել նույնությամբ, օրինակ՝ լամպ, ֆարս.

ե) եթե ա-ն հանելու դեպքում բառը կարող է շփոթվել մի ուրիշ (հատկապես անձ ցույց տվող) բառի հետ, այդ թվում ընդհանրապես -ика-ով, -ера-ով վերջացող բառերի դեպքում. օրինակ՝ տեխնիկա (հմտ. տեխնիկ), մեխանիկա (հմտ. մեխանիկ), պրեմյերա (հմտ. պրեմյեր), ռումբա (հմտ. ռումբ), ֆրոնդա (հմտ. фронт), սավաննա (հմտ. սավան), սինյորա (հմտ. սինյոր), սատիրա (հմտ. սատիր) և այլն:

զ) եթե բառը ռուսերենում ունի ա-ով և առանց ա-ի տարբերակներ. օրինակ՝ գազել (ռուս. газелла, газель), մաներ (ռուս. манера, манер՝ իմաստային որոշ տարբերությամբ), զարնիտուր (ռուս. гарнитура. гарнитур) և այլն.

է) երաժշտական և պարային հետևյալ տերմինների մեջ՝ օկտավա, էստրադա, կապելլա, տաբանտելլա, վիոլա, բարկարոլա, կանցոնա, ուվերտյուրա, տոկատա և այլն.

ը) հագուստեղեն նշանակող բառերում. օրինակ՝ ալմավիվա, պիժամա, պանամա և այլն.

թ) բժշկական հետևյալ բառերում՝ էկզեմա, էմֆիզեմա, պլագմա, անգինա, դիետա, սարկոմա, կլիգմա, տրավմա և այլն.

ժ) կենդանիների անուններում՝ մեդուզա, մակակա, սալակա, կամբալա և այլն.

ժա) հետևյալ կապակցությունների դեպքում՝ -ава, -ага, -ыга, -нада, -ика, -лла (բացի նովն և գազել բառերից, որոնցից երկրորդի մասին տե՛ս գ կետը), -нна, -она, -уна, -ера, -ора (բացի մանրագոր բառից), -ура (բացի гарнитура բառից, որի մասին տես գ կետը), -сса (բացի իգոգլոս բառից, որ նպատակահարմար է փոխարինել զուգաբանությու ճամարժեքով). օրինակ՝ ագավա, մալագա, մամալիգա, սպարտակիադա, օլիմպիադա, տեխնիկա, տաբանտելլա, հիգիենա, անտեննա, կանցոնա, կոմունա, խոլերա, սինյորա, ստյուարդեսա և այլն.

ժբ) ավանդաբար ա-ով գրվող հետևյալ բառերում՝ ամեռքա, կոլեգա, արմաղա (պտմ.), սիլֆիդա (դցբ.), պրոպագանդա, վերանդա, անակոնգա, զլուկոգա, միմոգա, ֆրուկտոգա, պաուգա (փոխարինելի դադար բառով), ֆա-բուլա, պրեսմբուլա, ֆոմուլա (փոխարինելի բանաձև բառով), ամպուլա, դրամա, պանորամա (փոխարինելի համայնապատկեր բառով), տրավմա, բո-հեմա (մա-ն ալյստեղ ածանց չէ), սիոեմա (բայց սֆեմ), դիլեմա, նիրվանա. լիանա, դիսցիպլինա, ռուտինա (փոխարինելի հնամուլություն բառով), սին-կոպա, ավանտյուրա, անկետա, կոհորտա, վալյուտա:

Ման. Մնացած դեպքերում ա-ն զեղչել, մանավանդ անզլիական, ֆրանսիական, գերմանական ծագում ունեցող ալն բառերում, որոնք -ա չունեն. օրինակ՝ հեկատոմբ, ալ-տերեանտիվ, դիրեկտիվ, բրիգադ, դեկատ, բարիկադ, բալլադ, սերենադ, ռոքիեզոնադ, շաբադ, սինուսոիդ, լեզենդ, վիսկոզ, կլասկ, մոլեկուլ, դիագրամ, պոարլեմ, անտիլոպ, բոռլյուր, գրավյուր, կոռոդիեատ, սոնատ, էստաֆետ, կոնֆետ և այլն:

5. Լատ. ea, ia և համապատասխան ռուս. ея, яя կապակցությունները տառադարձել եա, իա. օրինակ՝ ասամբլեա, Կոռեա, Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն:

6. Լատ. ia-ով և ռուս. яя-ով վերջացող անձնանունները տառադարձել լա. օրինակ՝ Ազենյա, Պուլիեռյա. Օֆելյա և այլն:

Ման. 1. Շեշտակիր ռուս. я-ն տառադարձել իա. օրինակ՝ Անաստասիա, Լիա, Մա-րիա:

Ման. 2. Կովկասյան և հատկապես վրաց. ia-ով վերջացող ազգանունները տառադարձել իա-ով. օրինակ՝ Ալեքսանդրիա. Գուլիա, Ժոդյանիա և այլն:

7. Ռուս. я-ն և եя-ն տառադարձել յա. օրինակ՝ Պետյա, Վանյա, Դեմ-յան, Նմելյան և այլն:

Ման. Այդպես տառադարձել նաև չինական և արևելաստիական я, եя-ով (լատ. ia) բառերն ու անունները. օրինակ՝ Տյանշան, Տյանծին, Վենտյան (լատիս մայրաքաղաքը) և այլն:

8. Լատ. e-ն (ֆրանս. նաև ai-ն) և ռուս. э-ն տառադարձել բառասկզբում է և բառամիջում ու բառավերջում ե՝ ըստ հայերենում է-ի և ե-ի գրույթյան լնդհանուր կանոնի. օրինակ՝ էդգար, էդուարդ, էլեկտրոն. էսկալդրա, էսկալա-ցիա, Բեռլին, Գերմանիա, Հերդեր, սեր (ռուս. сэр<անգլ. sir), Տեն (ռուս. Тэн<ֆրանս. Taine) և այլն:

Ման. 1. Ռուսական նորագույն հապավումների э-ն բառամիջում տառադարձել է- օրինակ՝ Եկա (Եկամտ):

Ման. 2. Հունարենից և այլ լեզուներից հնում փոխ առնված բառերը թողնել ե-ով. օրինակ՝ եպարխոս, եպիսկոպոս, եվրիպիդես (փիսկ. էվրիպիդես) և այլն:

9. Ռուս. с-ն բոլոր դիրքերում տառադարձել ե-ով. օրինակ՝ Ելենա, Ե-մելյան, Եֆրեմ, Սերգեյ և այլն:

10. Լատ. je, ie և համապատասխան ռուս. ье, ье կապակցությունները տառադարձել յե. օրինակ՝ ինյեկցիա, ինյերյե, կարյեռա, Մոլյեռ, Պյեռ, Պո-վոլոյե, պրեմյեռ, սուրյեկտ, Վլետեամ, օրյեկտ, ֆելյետոն և այլն:

Ման. Ռուս. ազգանունների ьеб կապակցությունը տառադարձել և. օրինակ՝ Գուրև, Յուրև, Վասիլև և այլն:

11. Շչականներից հետո օ արտասանվող ոռու. օ-ն տառադարձել ո (жѐ, чѐ, шѐ, щѐ—ժո, շո, շո, շո). օրինակ՝ Լիխաչեվ (Лихачев), Խրուշչով (Хрущев), շեշտկա (щетка—մի տեսակ դոփապար) և այլն:

12. Լատ. և ոռու. օ-ն տառադարձել բառասկզբում օ. բառամիջում և բառավերջում՝ ո՝ ըստ օ-ի և ո-ի դրուժյան ընդհանուր կանոնի. օրինակ՝ Օլգա, Օնեգին, Օսակա, բուլեիկ, Բուլտեիկով, Կոլեսնիկով, Կոմունիստ և այլն:

Ման. Բառամիջի կրկնակի օ-ն (օօ) տառադարձել կրկնակի ո (ոո), եթե այդ արտասանությունը պահպանվում է. օրինակ՝ կոսպերացիա, կոսպտացիա, կոսդիկատ, կոսդիկացիա և այլն:

13. Լատ. ոօ և ոռու. օօ կապակցությունները բառասկզբում տառադարձել ո, բառամիջում և բառավերջում՝ վո. օրինակ՝ Ոլգա, ոլտ, Ոլտեր, ոկալ, Որոշիլով, Որովսկի, Կովալսկի, Կորվո, Պեյվո, Պրեվո (Պրեո), ստատուս-ֆվո և այլն:

14. Քմայնացած օ, u (ֆրանս. eu, eou, u) ձայնավորները, որոնք ոռուսերեն տառադարձվում են օ, ю, տառադարձել յո, յու. օրինակ՝ դիրիժյոր, ռե-ժիսյոր, Քյոլն, ավանտյուրա, դեբյուտ, սալյուտ, վալյուտա և այլն:

15. Միջադպրի հնչյունական տառադարձությամբ ո-ով արտահայտվող անգլիական փակ վանկերի u-ն (երբեմն էլ օ-ն, ou-ն) տառադարձել ա և ոչ ե կամ ու. օրինակ՝ Բակ (Buck), Համֆրի (ոչ Հեմֆրի) (Humphry) և այլն:

Ման. Արդեն լայն տարածում գտած՝ ու-ով գրվող բառերը թողնել անփոփոխ. օրինակ՝ Դոբլին, Դոնկան և այլն:

16. Գերմաներենի ei երկբարբառը, որ ոռուսերեն տառադարձվում է մերթ ей, մերթ ай, տառադարձել միշտ այ. օրինակ՝ Լայպցիգ, Հայլեբերգ, Վայմար և այլն:

17. Ռուսական բառերի ѣի կապակցությունը տառադարձել ի. օրինակ՝ Գորկի, Շատի (ոչ Շատիյ), Ուսպենսկի և այլն:

18. Օտարազգի և ոռու. բառերի չեղարկված վանկերի թուլացող և ր-ին (ոռուսերենում նաև ա-ին) մոտեցող վանկերի ձայնավորները տառադարձել ինչպես շեշտի տակ գտնված դիրքում՝ ոչ ր-ով. օրինակ՝ Բարտոն (և ոչ Բարտրեն), Բեկոն, Լիսյամոն, Լեմոնտով, Կոստյուս, Մոսկվա, Ռոստով, Ռոնենո, Ռոշիլով և այլն:

19. Ձայնավորին նախորդող բառասկզբի լատ. i-ն (I), որ ոռուսերենում տառադարձվում է II (И), տառադարձել ի. օրինակ՝ իեն, իոն, իոնիական և այլն:

Ման. Գերմ. և որոշ այլ լեզուների բառակցի ja, je, jo (Ja, Je, Jo) կապակցությունները որոնք ոռուսերենում տառադարձվում են я, е (ѣ), ѱо [Я, Е (ѣ), Ё] տառադարձել Եա, Ե, Եո (Եա, Ե, Եո). օրինակ՝ Եագո, Եակոբ, Եմեն, Եոհան, Եոկոստա, Եոշկար-Օլա և այլն:

20. Հունական և լատինական բառերի s-ով վերջավանկերը տառադարձել աս, ես, իս, ոս, ընդ որում լատինական -us-ով վերջացող բառերը տառադարձել ոս-ով. օրինակ՝ Աթանաս, Անաստաս, Անաֆաստոս, Եվրիպիդես, Հեմես, Պարիս, Դիոնիսիոս, Փիլիպպոս, մագիստրոս, օգոստոս և այլն:

Ման. 1. -us-ով վերջացող ոչ լատինական անունները տառադարձել սա-ով. օրինակ՝ Մարիսա, Պաուլուս և այլն:

Ման. 2. Հունական ուղղականի-*ad-*ի փոխարեն սեռականի *-ados-*ից կազմված Հել-լադա, Պալլադա և այլն ձևերը պահպանել ավանդական ձևով:

Ման. 3. Հիշյալ վերջավանկներից զուրկ ավանդական ձևերը պահպանել նույն ությամբ. օրինակ՝ պոետ, Արիստոտել, Հերոդոտ, Գևորգ և այլն:

21. Հնդկական և արևելյան մի շարք այլ լեզուների շնչեղ ձայնեղ *bh, dh, gh, jh (jñ)* հնչյունները, որոնք ռուսերեն տառադարձվում են *бх, дх, гх, джх* և նույն, տառադարձել բն, դն, գն, ջն կապակցություններով. օրինակ՝ Մահաբհա-րատա (ոչ Մահաբհարատա կամ Մահաբարատա), Մադհիա-Բհարատ, Գնոշ, Բնիլայի և այլն:

22. Նվրոպական բոլոր հին ու նոր լեզուների դեպքում, բացի անգլերենից, *p, t, k-*ն (այլև *ca, co, cu* կապակցությունների՝ *k-*ին համապատասխանող *c-*ն) և համապատասխանաբար ռուս. *п, т, к-*ն տառադարձել *պ, տ, կ*. օրինակ՝ պրակտիկա, պրոֆիլ, Պորտուգալիա, Տալլին, տակտիկա, Տարտյուֆ, կադր. կալիում և այլն:

Ման. Ավանդաբար *փ, բ, ք-*ով տառադարձվող մի շարք բառերում պահպանել տա-րածված դրույթունը. օրինակ՝ Փարիզ (Paris), Քյոլն (Köln) և այլն:

23. Անգլերենի դեպքում *p, t, k-*ն (և *ca, co, cu-*ի *c-*ն) տառադարձել բա-ռասկզբում *փ, բ, ք*, մնացած դիրքերում *պ, տ, կ*. օրինակ՝ Փարկեր (Parker), Փաուել (Powell), Փիոլ Հարբոր (Pearl Harbor), Փիտ (Pitt), Փլիմութ (Plymouth), Փայկ (Pike), Փեյն (Paine), Թաֆտ (Taft), Թեյլոր (Taylor), Թոյնբի (Toynbee), Թուկ (Tooke), Թրուման (Truman), Քաբոտ (Cabot), Քառնեգի (Carnegie), Քենեդի (Kennedy), Բրուկ (Brook), Դուայտ (Dwight), Լոկ (Lock), Լիպման (Lippman), Լասկի (Laski), Հոկ (Hawke), Սկոտ (Scott) և այլն:

Ման. Արդեն լայն տարածում գտած բառերի և անունների ավանդական ուղղագրու-թյունը թողնել անփոփոխ. օրինակ՝ կու-կլուֆ-կլան (փխկ. Քու-ֆլուֆ-ֆլան) և այլն:

24. Արևելյան այն լեզուների դեպքում (կորեերեն, տիբեթերեն, բիրմա-ներեն, հնդկական լեզուներ և այլն), որոնք տարբերում են պարզ խուլերը շնչեղ խուլերից. *p, t, k, c, ձ-*ն և համապատասխան ռուս. *п, т, к, ц, ч-*ն տառադարձել *պ, տ, կ, ծ, ց*, իսկ *ph, th, kh, ch ձի-ն* և համապատասխան ռուս. *пх, тх, кх, цх, чх-*ն տառադարձել *փ, թ, ք, չ*. օրինակ՝ կոր. Փենյան (ոչ Փյենյան), Փատ-նի (ոչ Փխատ-չի), Ջունչոն-Պուկդո, Ինչոն, բիրմ. Բա-մաֆիտ, Թակին-նու (ոչ Թխակին-նու) և այլն:

Ման. Ձինարենի և արևելյան մի շարք այլ լեզուների՝ շնչեղ խուլերից տարբերվող ձայնեղամոտ խուլերը, որոնք ռուսերեն տառադարձվում են *б, д, г, цз, чж* ձևով, տա-ռադարձել *բ, դ, գ, ձ, չ*. օրինակ՝ Մաո Ջե-Դուն (ոչ Մաո Ցզե-դուն), Թյանձին (ոչ Տյանցզին), Սինձյան (ոչ Սինցզյան), Ջյանսի (ոչ Ցզյանսի), Ջոու Էն-լայ (ոչ Չոու Էն-լայ), Ջեձան (ոչ Ցեցզյան), Դույչոու (ոչ Դույչոու) և այլն:

25. Արևելյան մնացած բոլոր լեզուների դեպքում (թյուրքական, սեմա-կան, իրանական, չինարեն և այլն), բացի ճապոներենից, *p, t, k, c, ձ-*ն և համապատասխան ռուս. *п, т, к, ц, ч-*ն տառադարձել *փ, թ, ք, չ*. օրինակ՝ Թալմուդ, Թաջիկստան, Թայֆուն, Թեմրան, Թեյ, Քամբոջա, Քիրմանշահ և այլն:

Ման. Ճապոնեթենի դեպքում *p*, *t*, *k*-ն և համապատասխան ուռւ. *π*, *τ*, *κ*-ն տառադարձել *պ*, *տ*, *կ*. օրինակ՝ խիրոխիտո. խարակիրի. Կամակուրա. Կատականա, Կոտոկու, Մոտոկի, Տեյկոկու, Տակուգավա, Տակուդա և այլն:

26. Որպես մեկ բաղաձայն արտասանվող օտարազգի *dt*, *ck* կապակցությունները տառադարձել *կ*, *տ* օրինակ՝ Շմիա (Schmidt), Հումբոլտ (Humboldt), Բակ (Buck), Լոկ (Lock) և այլն:

27. Հունական *b*-ն (*β*) տառադարձել *բ* օրինակ՝ բալիստիկա. Բակոնս. բարբարոս, բապտիզմ, բարոմետր. բիբլիական, բիոֆիզիկա. բյուրեղ և այլն:

Ման. Միջին և նոր շրջանի հունական անունների ավանդական դարձած *վ*-ով տառադարձությունը թողնել անփոփոխ՝ Վարվանո, Վասիլ:

28. Հունական ծագում ունեցող բառերի *ph*, *th*, *ch*-ն (*φ*, *θ*, *χ*), ուռւ. *φ*, *τ*, *χ*) տառադարձել *ֆ*, *թ*, *խ*, օրինակ՝ ֆաներ. ֆենոմենալիզմ, ֆանտաստիկական, ֆիլատելիստ, ֆիլնարմոնիա, ֆոսֆոր, ամորֆ, ամֆիբիա. թեմա, թեոկրատիա, թեորեմ, թերմոդինամիկա. պենմոթորաֆս. խարտիա, խոլերա, խրոնիկա, մեխանիկա, սխեմա և այլն:

Ման. 1. Հունարենից կատարված հին փոխառություններում պահպանել *փ*, *ք*-ն՝ փոխանակ *ֆ*, *խ*-ի. օրինակ՝ փասիան, փյունիկ, փարո, փարտուղար, փամիզ և այլն. *ք*-ն պահպանել նաև նոր ժամանակներում փոխ առնված, բայց ավանդաբար *լ* ունեցող բառերում՝ ֆաոս, ֆիմիկոս, ֆլոր և այլն:

Ման. 2. Ոչ հունական բառերի *ch*-ն տառադարձել ըստ փոխատու լեզվի արտասանության (անգլ. *չ*, ֆր. *շ*, գերմ. *խ*). օրինակ՝ շարտիզմ, շեմպիոն (անգլ.), շանս, շարժ, շիֆոն, շիֆր, շովիեիզմ (ֆր.) և այլն:

Ման. 3. Որպես խոշ շփական արտասանվող անգլ. *th*-ն (*θ*) տառադարձել *թ*. օրինակ՝ Թոմ (Thom), Թոմսոն (Thomson), Սմիթ (Smith), Փլիմութ (Plymouth) և այլն:

29. Լատ. *q*-ն տառադարձել *ֆ* և համապատասխանաբար *qu*-ն՝ *ֆվ*, *եթե* *u*-ն արտասանվում է. օրինակ՝ ֆվանտ, ֆվարտ, ֆվազիմոդո, ֆվատրոնեմտո, ֆվարտետ (*ոչ* կվարտետ), ֆվարց (*ոչ* կվարց), ֆվինտա, ֆվինտետ, ֆվիրինալ, ֆվորում, աֆվարիում (*ոչ* ալվարիում) և այլն:

Ման. Արաբ. և որոշ այլ լեզուների համար ընդունված տառադարձության կոկորդային *q*-ն տառադարձել *կ*. օրինակ՝ Կանիբ:

30. Իտալ. *gia*, *gio*, *giu* և *cia*, *cio*, *ciu* կապակցությունները, որոնք ուռւ. սերենում տառադարձվում են (առանց հետևողականության) *джа*, *джо*, *джы* և *ча*, *чо*, *чу*, երբեմն էլ *джна*, *джно*, *джну* և *чна*, *чно*, *чуу* կապակցություններով, տառադարձել, իտալական արտասանության համեմատ, *ջա*, *ջո*, *ջու* և *չա*, *չո*, *չու* կապակցություններով. օրինակ՝ աղաջո (*ոչ* աղաջիո), Զակամո, Զովաննի, Զուգեպպե, սոլֆեջո, Պոջո, Բոկաչչո, Բրաչչոլինի, Մազոլչչո և այլն:

31. Լատ. *r*-ն և ուռւ. *p*-ն բառասկզբում, այլև բառամիջի *ն*-ից և *լ*-ից առաջ գտնված դիրքում տառադարձել *ռ*-ով, մնացած դեպքերում՝ *ր*-ով. օրինակ՝ ռադիկալ, ռադիո, ռախիտ, ռայխստագ, ռասա, ռացիոնալ և այլն, առլեկին, Բեռլին, մառլա, Շառլ, Առնոլդ, Մառն, առտելի և այլն. առկտիկա, բյուրոկրատիա, դեներալ, Դարվին և այլն:

Ման. Արդեն ավանդական դարձած ալտերնատիվ, ինտերնացիոնալ (կոմիտեներ), Կարլ բառերում գրել *ր*:

32. Գրության մեջ պահպանվող, բայց շարտասանվող կամ թույլ արտասանվող անգլիական Դ-ն տառադարձել Դ կամ Ռ՝ լատ. Դ-ի (ռուս. Դ-ի) տառադարձման ընդհանուր կանոններով. օրինակ՝ Բերկլի (Berkley). Ուորկեր (Worker), Ուոռներ (Warner), Ստուրտևանտ (Sturtevant) և այլն:

33. լատ. Լ-ն, արտահայտվի այն ռուս. փափուկ Պ-ով (Ль, ле, лѣ, Ля, лю, ля), թե կոշտ Պ-ով (П, пэ, по, пы, пу, па), տառադարձել լ՝ առանց քմայնացման նշանի և յ-ի). օրինակ՝ արտ, ասֆալտ, էվուուցիա, լակմուս, Լեկոկ, լեյբորիստական, լումպեն, ռեպուցիա և այլն:

Ման. 1. Զինարենի և հարավ-արևելյան Ասիայի մի շարք այլ լեզուների lia, liu կապակցությունները, որոնք ռուսերեն տառադարձվում են Ля, лю, տառադարձել՝ լյա, լյու. օրինակ՝ կան-8ի-շառ, կառզուն, կառյան, կառիս, կյուան, կյուքան և այլն:

Ման. 2. Հնուց ավանդաբար դ-ով տառադարձված բառերն ու անունները թողնել անփոփոխ. օրինակ՝ նիկոլայոս, Պոզոս, Սոզոմոն և այլն:

34. Ռուս. բառերի փափուկ Պ-ն Лѣ, лю, ля կապակցություններում տառադարձել լյ (լյա, лյу, лья), մնացած դեպքերում լ՝ առանց յ-ի և քմայնացման նշանի. օրինակ՝ կյուբի, կյուբիմով, կյուբեբցի, կյասուեմով և այլն. բոլրեկի, Լեմա, Լիխաշով և այլն:

35. Օտարազգի Ի-ն, որ ռուսերենում տառադարձվում է Դ կամ Խ, տառադարձել Ի. օրինակ՝ Հաագա, հալոգեն, Համսուն, Հարուդ, Հեգել, Հեկտոր, հեկտոլիտր, հեմոգլոբին, հումոր և այլն:

Ման. Օտար ծագում ունեցող ռուսական ազգանունների Դ-ն տառադարձել՝ ըստ ռուսական արտասանության. օրինակ՝ Գայդա, Գեբցեն և այլն:

36. Ֆրանս., իտալ., իսպ. նյ-ն (ֆրանս., իտալ. gn, իսպ. ñ), տառադարձել նյ. օրինակ՝ կարմանյով (ֆրանս. carmagnole, ռուս. карманьола), միեյոն, մանյանա և այլն:

37. 3 արտասանվող ֆրանս. it(1) կապակցությունը տառադարձել յ. օրինակ՝ Մեյլե (Meillel), տրավայ (travail) և այլն:

Ման. 1. Ֆրանսերենում յո արտասանվող illo կապակցությունը, որ ռուս. տառադարձվում է ЛЮ, տառադարձել լյու. օրինակ՝ բաալյոն, գիլյոտին և այլն:

Ման. 2. Ֆրանս. illia, illio կապակցությունները, որոնց Լ-ն արտասանվում է լ, և որոնք ռուսերենում տառադարձվում են ЛЛѦА, ЛЛЮ, հազվադեպ նաև ЛЬО (МЯЛЛѦАРД, МЯЛЛИОН կամ МЯЛЬОН), տառադարձել լիա, լիու. օրինակ՝ միլիադ, միլիոն և այլն:

38. Օտարազգի Խ-ն (հուն. ξ), այլև գերմ. chs-ն տառադարձել ֆու. օրինակ՝ Մարֆա, բոֆա, կոֆա, տաֆի և այլն:

Ման. Բուն ռուս. КС-ով բառերը տառադարձել կս-ով. օրինակ՝ Ակսակով:

39. Զայնեղ բաղաձայններից հետո գ արտասանվող անգլ. S-ն, այլև ո-ից առաջ գ արտասանվող գերմ. S-ն տառադարձել ս. օրինակ՝ Բանգս, Ենսեն, Զեմս, Զոնսոն, Ուելս և այլն:

Ման. Ավանդաբար գ-ով գրվող և արտասանվող բառերը թողնել գ-ով. օրինակ՝ Զաուդ:

40. Անգլ. w-ն տառադարձել ու (ընդ որում wa-ն՝ ուա), բացի այն դեպքից, երբ իրար կողքի կարող են հանդիպել երկու ու (անգլ. wu, wo, woo). այս դեպքում գրել և արտասանել վու. օրինակ՝ Ուալտոն (Walton), Ուոռներ (Warner), Ուոռեն (Warren), Ուայտ (White), Ուայլդ (Wilde), Ուիլկինսոն և այլն:

(Wilkinson), Ուիլսոն (Wilson), Բայջ Վուդ (Wood), Վուլֆ (Wolf, Woolf) և այլն:

Ման. Ավանդաբար վ-ով տառադարձված՝ լայն տարածում ունեցող անունների վ-ն պահպանել. օրինակ՝ Վալտեր Սկոտ, Վաշինգտոն, Վիլյամ Շեքսպիր:

41. Օտար. և ռուս. կրկնակ բաղաձայնները տառադարձել մեկ բաղաձայնով. օրինակ. ակուդդ, ակրեդիտիվ, ակեգրո. ալիգատոր, ամիակ, ամուլիում, Բարբյուս, կլասիցիզմ, կոլեգիա, կոլեկտիվ, կոմունիզմ, կոմունիստ և այլն:

Ման. 1. կրկնակ ԴԴ-ն (ռուս. рр) ի ձայնավորից առաջ տառադարձել Բ, մնացած դեպքերում ռ. օրինակ՝ քարիկազ, Գարիկ, տերիտորիա և այլն. Մառ, Պյուստո, տեռոր և այլն:

Ման. 2. կրկնակ բաղաձայնի՝ հայերենում երկար կամ ուժգին արտասանվելու դեպքում այն դրել կրկնակ բաղաձայնով. օրինակ՝ կասսա, մասսա, վիլլա և այլն:

Ման. 3. կրկնակ բաղաձայնները պահպանել հատկապես իտալական բառերում. Զովաճճի, Բոկուչչո, Տասսո և այլն:

42. Աստվածաշնչային, հունական և այլ կարգի՝ հնում գործածության մեջ մտած հատուկ անունները, եթե դրանք տրվում են հայերին կամ պատմական անձների, պահպանել ավանդական ուղղագրությամբ. օրինակ՝ Անտոնիոս, Աթալաս, Բարսեղ, Գարգիլի, Դավիթ, Նդիսագա, Նդիսաբեթ, Հովակիմ, Հովսեփ, Մատթեոս, Պողոս, Սամվել և այլն:

Ման. Այդ նույն ծագումն ունեցող օտարազգի և ռուսերեն անունները տառադարձել սրանց արտասանության և գրության համապատասխան՝ տառադարձության ընդհանուր կանոններով. օրինակ՝ Անտոնի, Աֆանասի, Վասիլի, Դավիդ, Նիզավետա, Յուրի, Մատվեյ, Պավել, Պաուլ, Պոլ, Սամուիլ և այլն:

ПРИНЦИПЫ ТРАНСКРИПЦИИ ИНОСТРАННЫХ СЛОВ

Г. Б. ДЖАУКЯН
Чл.-корр. АН Арм. ССР

Со времени решения Терминологического комитета при Совете Министров Армянской ССР о нормах и принципах армянской транскрипции иностранных слов прошло более тридцати лет. За этот период изменилось отношение к некоторым правилам, усилилась тенденция к более точному обозначению произносительных норм иностранных языков, значительно расширился круг языков, с которыми приходится иметь дело. Отсутствие более или менее полного перечня правил трудных случаев транскрипции приводит к разнообразию в передаче иностранных слов (в частности, терминов и собственных имен).

Обращаясь к насущным вопросам армянской транскрипции иностранных слов, автор предлагает соответствующий проект на рассмотрение Терминологического комитета.